Աղբիւրի յաւելուած ՏԵԼԵՁՈՆ № 282

Լոյս է տեսնում տաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 16 կիրակի մայիսի 6 | տասնեւերկուերորդ տարի 1901

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է 1901 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աղբիւրի տարեկան գինը 3 րուբ. *Տարազինը* 6 ր.։

Հասցէ՝ Тифлисъ, редакція иллюстр. жур. АГБЮРЪ-ТАРАЗЪ կամ *Tiflis* (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz

Վ. Գ. ԲԷԼԻՆՍԿՈՒ ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ

—

«Բէլինսկին այն բարձր փիլիսոփայական կազմակերպութիւններից մէնն էր, որպիսիներին երբ և իցէ պատահել եմ իմ կեանքում»։

Խշ. Օռլովսկի („Русск. Арх.“ 1874 г. стр. 399).

—

Բէլինսկին փիլիսոփայութիւնն ուսումնասիրում էր Ստանկեւիչի շրջանում. այդ շրջանը ամբողջութեամբ կանուած էր փիլիսոփայական հարցերով։ Իւրաքանչիւր անդամը մշակում էր այստեղ իր աշխարհայեցողութիւնը։ Այդ շրջանի դէպի հասարակական հարցերն ունեցած հայեացքի բնորոշ և ճշգրիտ նկարագիրը տալիս է Կոնստանդին Ակսակովը։ «Այդ շրջանում մշակւում էր ընդհանուր հայեացք Ռուսիայի գրականութեան, աշխարհի մասին—հայեացք մեծ մասամբ բացասական։ Փիլիսոփայութիւնով հրապուրելը հասաւ այն աստիճանին, որ այն ամենը, ինչ որ չէր պատկանում այդ ճիւղին, շրջանի կողմից դէն էր գցւում։ Շրջանն իր փիլիսոփայական հայեացքը գործադրում էր բանաստեղծութեան և գեղարւեստի վերաբերմամբ։ Նրանք բնականաբար ոգևորւում էին, երբ թւում էր, որ իրանց հիացնող բանաստեղծական աշխատութիւնը—Շէքսպիրի ողբերգութիւնը, Գեօթէի բանաստեղծութիւնները, Գոգոլի վիպակը—հաստատում էին, կամ բացատրում նրանց յայտնի փիլիսոփայական այս կամ այն հարցը։ [1])

Առաջին փիլիսոփայութիւնը, որով հրապուրւեց Ստանկեւիչի շրջանը, Շելլինգի բնապաշտութիւնն էր (пантеизмъ)։ Ահա ինչպէս է նկարագրում այդ ժամանակամիջոցը Ստանկեւիչի կենսագրող Աննենկովը։ «Մի ինչ որ հանդէսով էր ընթանում կեանքը, երբ ցոյց տրւեց բնութեան երեւոյթների բացատրութեան հնարաւորութիւնը, հէնց այն օրէնքներով, որոնց ենթարկւում է մարդկային հոգին իր զարգացման ընթացքում. երբ ցոյց տրւեց հնարաւորութիւն փակել, ըստ երեւոյթին ընդմիշտ, այն անդունդը, որ բաժանում է երկու աշխարհը և նրանցից շինել մի աւազան յաւիտենական գաղափարը և գիտակցութիւնը տեղաւորելու համար... [2])

Ինչ վերաբերում է փիլիսոփայութեան կարգապահութեան, կարելի է վստահ ասել, որ բոլորից բարձր կանգնած էր Ստանկեւիչը. նա էր ամբողջ շրջանին գոյն տալիս, լուսաբանում, մեկնում փիլիսոփայական իմաստները։

Բէլինսկին գնում էր նրա ազդեցութեան տակ, բայց և այնպէս, ինչպէս որ մենք վերեւում յիշեցինք, նա կուրօրէն հետեւող չեղաւ։

[1]) Նոր. т. I с. 110
[2]) Ibid. եր. 103

Ստանկևիչից ոչ պակաս ազդեցութիւնն ունեցաւ Բէլինսկու վրայ և յայտնի Միքայէլ Բակունինը։ Վերջինս այդ ժամանակ հէնց նոր էր դուրս եկել ծառայութիւնից (նա ռուսաց զօրաբանակի սպայ էր) և Ստանկևիչի խորհրդով ուսումնասիրում էր փիլիսոփայութիւնը։

Նա այդ գործում ցոյց տւեց փայլուն ընդունակութիւն, որը և վերջ ի վերջոյ դարձաւ նրա փառքը. նրան անւանում էին «փիլիսոփայութեան սիրող»։ Ջուտով նա դարձաւ (Ստանկևիչի արտասահման հեռանալուց յետոյ) շրջանի ամենահեղինակաւոր անդամը։ Ամեն անգամ, երբ յայտնւում էր մի որևէ անհասկանալի հարց, շրջանը դիմում էր Բակունինի աջակցութեան։

Նրա զօրեղ փիլիսոփայական պատրաստականութիւնը և Բէլինսկու անդադար ձգտումը՝ հաշտեցնել գաղափարը իրականութեան հետ, հասցրին այն տեղը, որ Բէլինսկին շուտով ընկաւ Բակունինի ազդեցութեան տակ։ Բէլինսկուն հէնց իր ասելով դրաւեց Բակունինի եռուն կեանքը, անհանգիստ հոգին, աշխոյժ ձգտումը դէպի ճշմարիտ, նոյնպէս և քննադատական պահանջները, համարձակ ժխտումը այն բոլոր տեսական հիմունքների, որոնք չեն դիմանում քննադատութեան։

1836 թ-ին Բէլինսկին Բակունինից ընդունեց Ֆիխտէի փիլիսոփայութիւնը։

Հետևեալ կերպով է պատկերացնում Բէլինսկին ի այդ ծանօթութիւնը։ «Ես կապւեցի Ֆիխտէի հայեացքի հետ եռանդով և մոլեռանդութեամբ։ [1])

Դրա միջոցաւ նա իմացաւ, որ «գաղափարական կեանքն է հէնց իսկական և դրական կեանքը, իսկ այսպէս անւանւած իրական կեանքը—բացասութիւն է, արհեստական, ոչնչութիւն, դատարկութիւն։ [2])

Սակայն ինչ էր Ֆիխտէի փիլիսոփայութիւնը։

Մի վերացական հայեացք ամբողջ պատմութեան մասին։ Իրաւ որ այն հարցին, թէ ինչու համար գոյութիւն ունի ժամանակակից չարիքը, ինչու ոյժը գերիշխում է իրաւունքների վրայ—Ֆիխտէն պատասխանում է «որովհետև մենք գտնւում ենք» մեղքի լիովին անկման շրջանում և այլն։ Իսկ թէ ինչ պատճառներից և հիմունքներից է ծագում այդ շրջանը, ինչու մարդիկ հէնց այդպիսի և ոչ այլ յարաբերութիւնների մէջ են ընկնում—Ֆիխտէի փիլիսոփայութիւնը չի պատասխանում։ Նա չի ընդունում իրականութիւնը, չի ընդունում մարդկային գոյութեան ինչպէս պատմական, այնպէս էլ ուրիշ որևէ պայմանները։

Այսպիսի հանգամանքներում, բնականաբար այդ փիլիսոփայութիւնը լայն բաց արեց իր դռները «աշխարհագրական և պատմական զարգացման պայմաններից խզւած և օդի մէջ կառուցւած վերացական գաղափարի առաջ։ Այդ վերացական գաղափարը հետևացնում էր հակատագրական հաւատ դէպի բանականութեան յաղթանակը։

Ուրեմն՝ վերացական գաղափարի ունեցած վերաբերմունքը դէպի իրականութիւնը պարզելու համար, Բէլինսկին անհրաժեշտ համարեց դրօյի հաւատարացնել երկրորդ հակաբանութիւնը, իսկ վերացական գաղափարը համարեց իրական, դրական։ Այնուհետև նա պէտք է աւելի անխնայ յարձակւէր ռուսաց իրականութեան վրայ։ յանուն այդ վերացական գաղափարի։ Նա այդպէս էլ անում է։

Ընդունելով այդ փիլիսոփայութիւնը, Բէլինսկին միևնոյն ժամանակ սկսում է կասկածել և ինքն իր մասին, իր սեփական ոյժերի մասին։ Խորհրդածութիւնները և այդ կասկածները հասցնում են նրան խիստ անմխիթար հետևանքի. «Ես դրախտի գոյութիւնը իմացայ նրա համար, որպէսզի ճանաչեմ իմ անձնական անզօրութիւնը ըմբռնել նրան. ես դրախտը ճանաչեցի նրա համար, որ հաստատապէս դիտենամ, թէ միայն նրա դռներին մօտենալը վայելչութիւն չէ, նրան շօշափելը, նրա անուշաբոյր ներգաշնակութիւնը զգալն է իմ միակ հնարաւոր կեանքը"...

Նա իրան անընդունակ էր համարում այդ փիլիսոփայութիւնն ուսումնասիրելու համար։ Բայց անհիմն կը լինէր կարծել, որ նա առհասարակ չէր կարող ըմբռնել փիլիսոփայութիւնը։ Բէլինսկու այդ խօսքերից պէտք է միայն եզրակացնել, որ նրա բնութիւնը, մտքի ամբողջ կազմը հակառակ էր վերացական խորհրդածութեան։ «Վերացականութեան շրջանը ինձ համար չէ—ասում է Բէլինսկին,—այդտեղ ես ինձ ճնշւած, վատ եմ զգում և իսկական մտածողութեան մէջ ես բոլորովին աննշան դեր եմ խաղում. իմ սփերան կրակոտ խօսքերն են և կենդանի պատկերները—այստեղ միայն ինձ ազատ և լաւ եմ զգում։ Իմ ոյժը, զօրութիւնը իմ անմիջական զգացմունքի մէջն է, ուստի ես երբէք չեմ հրաժարւի նրանից, որովհետև ցանկութիւն չունեմ հրաժարւելու ինքս ինձանից [1])։

Ընորհիւ լսելքի այդպիսի յատկութեան, Բէլինսկին ձգտում էր ամեն մի վերացական մտածմունք մի կերպ կապել գործնականի հետ։ Պատմում են, թէ մի բազմամարդ ժողովի մէջ, Ֆրանսիայի անցեալ դարու վերջին դէպքերի մասին խօսելիս, Բէլինսկին իր յայտնած ծայրայեղ կարծիքով շփոթեցրեց տանտիրոջը։ Վերջերում նա իր նամակում (1838 թ. 12 հոկտ.) ի միջի այլոց այդ միջնադէպի մասին խօսելով աւելացնում է, թէ բոլորովին չի զղջում, որ նա այն ժամանակ այդպէս էր կարծում, որ Ֆիխտեականութիւնը նա հասկացել է իբրեւ արմատական քաղաքական վարդապետութիւն...

1837 թ-ին Բէլինսկին թողնում է Ֆիխտէի փիլիսոփայութիւնը, թէպէտ պարզ յայտնի չէ, թէ ինչպէս և ինչու թողեց նա այդ սիստէմը, բայց հասկանալի է, որ դրա գլխաւոր պատճառը վերացական մտածողութեան անհնարաւորութիւնն էր։ Ֆիխտէականութիւնը կարող էր առժամանակ միայն նրան ձգտումների ծարաւն յագեցնել։

Վերջում նա այդ ժամանակի մասին գրում էր, «1837 թ. վերջին ես ուժասպառ եղայ վերացականութեամբ և ծարաւ էի զգում դէպի իրականութիւնը»։ [2])

Բացի այդ պատճառից նշանաւոր դեր խաղաց և այն հանգամանքը, որ իւրաքանչիւր իրականութիւն ունի

[1]) Ibid. եր. 175.
[2]) Ibid. եր. 172.

[1]) Ibid. ե. 237.
[2]) Ibid. ե. 224

իր բնորոշ կողմերը։ Ֆրանսիական իրականութիւնը նրա համար թանգ էր և սիրելի, ուստի անկարող էր նրան ներոյի հաւասարացնել, իբրև ոչնչութիւն յայտարարել։

Նա Փիլստէից կտրում է իր բոլոր կապերը և ըսկսում է նորանոր որոնումներ. նա յայտարարում է, որ ուսսաց իրականութիւնը տարբեր է ֆրանսիականից։ Իր երիտասարդ բարեկամին ուղղած նամակներից մէկում նա գրում է. «Ռուսիայի համար սահմանուած է բոլորովին այլ վիճակ, քան Ֆրանսիայի համար, որտեղ քաղաքական ուղղութիւնը, դիտութիւնը, գեղարուեստը և բնակիչների բնաւորութիւնն ունի իր նշանակութիւնը, օրինականութիւնը և լաւ կողմը։ [1])

Ա. Զ.

(Կըշարունակի)

ԲՈՒՆՆՕՏՏԻՑ

Ի ժամանակ ես ուղեցի
Փարթամ պսակ քեզ հիւսել
Եւ ծաղիկներ սրոնեցի,
Բայց զարուն չէր եկել։

Հիմա նրանք, որտեղ նայիմ,
Ամենուրեք անքանակ,—
Սակայն որ՞ին ես զարդարիմ
Դու սառկա՜ծ ես հողի տակ։

ՍԻՄ. ՊԱՊԻԵԱՆՑ

ԿԱՆԱՅԻ ՈԳԻՆ

Նուէր օր. Աննա Նազարեանին

(Մարիա Տուժիմայի)

Տրանք կանգնած էին դէմ առ դէմ. նա, տանջուած, յուսալքաբ ճշմարտութեան հասնելու ապարդէն ջանքերից, սպառած իր ոյժերը գոյութեան երկարատև կռւի մէջ, սակայն դեռ պապակուող լսելացնոր վայելքների անյագ ծարաւով, վայելքներ, որոնք գէթ մի րոպէ մոռացնել տային այն սոսկալի, սեւ Նիրւանան, որը դիւային ոյժով քարշում էր նրան դէպի իր անյատակ անդունդը։ Նա նայում էր կնոջը իր տղերսալից և թախծապատ աչերով։ Իսկ կինը բորբոքուած անվերջ մաքառումից, հպարտ չաղթանակով և զօրեղ իր տարած ազատութեան գիտակցութեամբը, պատասխանում էր այդ հայեացքին մի սպառնիչ ժպիտով, որ միայն արեան կարմրագոյն բծեր էր փայլեցնում մարդու գունատ այտերի վրայ։

[1]) Ibid. եր. 180.

—Ո՞վ ես դու, ասա՛ ինձ... շշնջացին վերջապէս նրա շրթունքները.—ես ցանկանում եմ, ես պէտք է վերջապէս հասկանամ քեզ. դէն ձգիր հոգիդ քողարկող այդ շղարշը. բաց արա իմ առաջ քո էութեան խորհրդաւոր գաղտնիքը, աւելի շուտ ես կըմբռնեմ բոլոր արարածների սկիզբն ու վախճանը, աւելի շուտ ես կըգտնեմ տիեզերքի բանալին, քան կըհասկանամ քեզ, քո ցանկութիւններդ և տենչերդ։ Երբեմն նկատում եմ քո մէջ հարիւրաւոր հոգիներ, իսկ երբեմն... և ոչ մէկը դրանցից։ Մերթ քեզ տեսնում եմ ոտքերիս գալարուող մի սարկաւկի, մերթ բռնակալ ես երևում դու աչքիս։ Պարզ ես և անկեղծ, ինչպէս արեգակի շլացուցիչ փայլը... բայց և սրտում ես այնպէս, ինչպէս և ոչ մէկը կենդանի արարածներից։ Այերիդ փայլը, շրթերիդ կրակը և այդ թրթռուն երերուող կուրծքդ, դրանք բոլորը իմ փաղաքշանքներս են աղերսում, իսկ երբ մեր շրթունքները միանում են, երբ հայեացքս սուզուում է այերիդ խորքը, երբ հեշտանքներով բաբախող սիրտս փնտրում է քոնը.—դու յանկարծ հեռացնում ես ինձ և փախչում, իսկ եթէ մնում էլ ես, դարձեալ ստում, դարձեալ կեղծում ու դաւաճանում։

Առաջ, շատ առաջ, երբ մեզ միացնողը միմեանց ձեռքն էր, ես զգում էի, որ դու իմ ոսկրներից, իմ մարմնից կտրած մի մասն ես, և քո ներկայութիւնը մի անմեկնելի բաւականութիւն էր պատճառում ինձ. իսկ այժմ, այժմ դու խուսափում ես և փախչում ինձնից, և՝ ինչ. որքան հեռանում ես, այնքան սաստկացնում է իմ ծարաւը, որքան նազում, պակասում է քեզ տեսնելու յոյսս, այնքան զօրանում է քո կարօտի հոգեմաշ վիշտը...

Մի խորհրդաւոր ժպիտ, լի արհամարհանքի և վշտի թոյնով, մի ժպիտ, որ ատելութեան ու կսկծի շանթեր էր փայլատակում, յաղթութեան և թախծի միախառն ցոլքերը արձակող մի ժպիտ սքողեց կնոջ դէմքը, ինչպէս գիշերւայ թանձրամած խաւարը։ Միայն պարզ, լայն բացուած աչքերում շողաց ինչ որ կրակ, որ անմիջական սարսուռ ազդեց մարդու մարմնին։ Կինը խօսեց.

—Նա ստեղծեց ինձ քեզ համար... Նա ենթարկեց ինձ քո իշխանութեան... Նա թոյլ տւեց քեզ իմ տէրը լինելու... և դու տիրում ես ինձ ու թագաւորում ինձ վրայ... ինչ է այլ ևս քո փափագը. ցանկանում ես գիտենալ ով եմ ես—դու ճանաչում էիր ինձ երբեմն, մեր գոյութեան արշալուսին, երբ նա ստեղծեց ինձ «քեզ նըման և իբրև քեզ օգնական»։ Այժմ դու չես ճանաչում ինձ. դու, որ դարերի ընթացքում կուում էիր ինձ հետ, ճնշում ինձ։ իսկ այժմ չես ճանաչում, չես հասկանում ինձ։ Ո՞վ եմ ես—ես կանացի բողոքող հոգին եմ, այն ոգին, որ չըբաւականացաւ դրախտի վայելքներով, այլ ցանկացաւ ամեն ինչ ըմբռնել, ամեն ինչ հասկանալ... Այն հոգին, որ կտրելով պտուղը բարւոյ և չարի գիտութեան ծառից՝ վազեց դէպի քեզ բախտից ու բերկրանքից արբեցած.—Վերցրու, կեր,—ասաց նա—և մենք էլ կընմանենք աստուածներին։ Դու վերցրիր այն պտուղը, որը պէտք է բանար քո աչքերը... Վերցրիր իմ ձեռքից և կերար, որովհետև դու էլ ցանկանում էիր նմանել աստուածներին։ Բայց երբ Ամենագէտը հարցրեց.—Ինչի՞ կերար.—դու, Նը-

րա նման ստեղծւածդ, դու, տիեզերքի տերը և իմ հրամանակալը, դու վախեցար քո ցանկութիւնից, դու սարսափեցիր քո արարքից և ամբողջ մեղքը ինձ վրայ բարդեցիր։

Նրա անէծքը ծանրացաւ ինձ վրայ ինչպէս բեռն և մենք հալածւեցինք դրախտից... Մեր բաժին դարձաւ դաժանելի աշխատանքը մի երկրի կրծքում, ուր փուշ և տատասկ էր միայն բսնում։ Մենք սկսեցինք աշխատել օր ու գիշեր և արիւն-քրտինքով վաստակել մեր ուտելու մի կտոր հացը։ Բայց մենք չըմեռանք «մահով», որովհետև ես իմ մէջ անմահութիւն էի կրում։ Ինձանով սկսւեց մարդկային վերածնութիւնը երկար ու ձիգ դարերի ընթացքում։ Ջատ էին իմ տառապանքները, անհամար իմ կրած ցաւերը, բայց ես սիրեցի անմահութիւնը իմ մէջ և փոխարինեցի նրան մայրական ստեղծագործութեան մի խելացնոր ոյժ։ Դու ես սիրեցիր այդ անմահութիւնը, բայց քո մէջ նա հեշտասիրութեան փոխւեց, զգայական վայելքների և իշխելու մի անյագ ծարաւի... Քո բազուկը ծանրանում էր ինձ վրայ և քո ոյժը ճնշում ինձ. ես գործիք դարձայ քո ձեռքին, հեշտասիրական վայելքների մի կոյր գործիք։ Երբ արհնանում էի քնից, դու համբոյրներովդ ծծում էիր իմ ամբողջ հոգին։ Իմ հոգին... դա մի անսպառ աղբիւր էր քեզ համար, որտեղից դու քաղում էիր քո ամբողջ ստեղծագործական ոյժդ, այն ոյժը, որով այդպէս գարնենում ես այժմ։ Յոյց տուր ինձ մի փայլուն հանճար, գոնէ անմահութեան արժանացած մի մի գործ, մի աշխատանք, որը բեղմնաւորւած չըլինէր կանացի ոգով։ Կայ մի արտիստ, իմաստնագէտ կամ մարդարէ, որ ներշնչւած չըլինէր կնոջից, որ իր ամբողջ ըստեղծագործութեամբ կնոջը չըլինէր պարտական։ Սակայն... ինչպէս սիրոյ մէջ օձի պէս գալարւում ես իմ ոտքերիս աչքան ժամանակ, մինչև որ անձննատուր եմ լինում քեզ, այս դէպքում էս դու նախ վերցնում ես ինձանից այն բոլորը, ինչ որ պակասում է քեզ, ապա դէն ձգում ինձ, ինչպէս հիւթասպառ մի պտուղ և այնուհետև արհամարհանքի ժպիտը դէմքիդ բացականչում.

—Նայեցէք դրան և դա կոչւած է ինձ օգնելու։

—Մի նայիր ինձ այդպէս, գիտեմ քո միտքը—դու հարցնում ես, ինչի եմ թոյլ տալիս քեզ հիւթասպառ անելու ինձ։ Գիտեմ ինչի.—իմ մարմինը մաշւում է և թառամում ծննդաբերական ցաւերից, իսկ իմ հոգին բարի է, գեղուն սիրոյ և անձնազոհութեան զգացմունքներով։ Ահա ինչի ես միշտ քո իշխանութեանդ եմ ենթակայ։

Երբեմն, երբ մեզ միացնողը միայն հեշտանքների ծարաւն էր—ասում ես դու—երջանիկ էի զգում ինձ քեզ հետ... քո հեշտանքների։ Բայց դու ցանկացար իմանալ, արդեօք երջանիկ էի ես ևս, քո սերունդների մայրը, որին դու ստրկուհիդ էիր դարձրել, որին հեռացնում էիր անգթօրէն, մինչ նա քո սիրովդ էր ընչում և միմիայն այն պատճառով, որ իմ դէմքը թոշոմել էր, աչքերս խամրել։ Երջանիկ էի ես, երբ դու ստիպում էիր ծագիկ հասակիս ջերմութեամբ տաքացնել քո ներութիւնից սառած արիւնդ, կամ երբ երկու մասի բաժանելով ինձ, մէկին հրամայել էիր ծնանել և շարունակել ներունդդ, իսկ միւսին, ինչպէս սպանդանոց վարւող անասունների դու աճուրդի էիր հանել և ծախում իբրև միս։ Եւ վերջապէս, ցանկացար դու իմանալ, հաճելի էր ինձ ուտել քո հացը, որ գնւած էր իմ ստրկութեան և նշաւակութեան գնով, այն հացը, որի ամեն մի կտորի համար կատաղի կռիւ էի մղում քո դէմ, կարծես ինձ տրւած չըլինէր ապրելու նոյնատեսակ իրաւունք, ինչպէս և քեզ։

Քո իշխանութեան, քո ոյժի տակ ես մոռացել էի, որ անմահ ոգի իմ, քո լծի տակ ես սովորեցի կեղծաւորէն ժպտալ, համբուրել, անձնատուր լինել քո հեշտանքներիդ, արհամարհելով և ատելով և հանդերձ։ Բայց դառնութիւնները բաժակը արդէն լցւած է, քո իշխանութիւնդ այլ ևս անտանելի է ինձ համար։

Ես կարօտեցի այն լոյսը, որ դարերի ընթացքում փակում էիր իմ աչքերից։

Ես սթափւեցի դարևոր քնից, ջախջախեցի այն շղթաները, որոնցով կաշկանդել էիր ինձ, իմ ազատ և անմահութիւն կրող հոգին... Ինձ, որ նոյնպէս, ինչպէս և դու ստեղծւած եմ Նրա նման։

Եւ ահա ես քո առաջդ եմ, ոչ իբրև քեզ օգնական, այլ իբրև վրիժառու իմ ոգու համար, որը նա չէր կարող ենթարկել քո իշխանութեան, որովհետև դա քեզ հաւասար մի ոգի էր, դա Նրա ոգին էր։ Ես ատում եմ քեզ իմ հոգուս բոլոր ոյժերով և պատրաստ եմ վրէժխնդիր լինել։

Վրէժխնդիր լինել այն բոլոր կանացի հոգիների փոխարէն, որոնց դու ստորացրիր նենգ ստրկութեամբ։

Վրէժխնդիր լինել այն մայրերի փոխարէն, որոնք մեռնում են, դեռ չըճաշակած մայրական քաղցրութիւնները։

Վրէժխնդիր լինել իրանց մարմինը վաճառող կանանց տեղ, որոնք տանջւում, մեռնում են, թունաւորւած կեղտոտ արիւնախառնութեամբ։

Վրէժխնդիր լինել որդեսպանների, թունաւորիչների փոխարէն, որոնք գալարւում են դժոխային տանջանքների մէջ։

Վրէժխնդիր լինել ուժասպառ, պատւազուրկ կանացի մարմինների, յուսահատ ջրահեղձների, հմանների այրւող խարոյկների փոխարէն...

Այդ բոլորը քո գործն է, քո, որ կամեցար ճնշել, կորացնել քո իշխանութեան տակ քեզ հաւասար մի ոգու։

Նա ընկաւ կնոջ ոտքերը խելագարի պէս, համարեա ուշագնաց և իր դողդոջուն շրթերով ու բոցավառ հայեացքով գթութիւն էր հայցում նրանից։

—Օ՜, դու հրաշալի ես, դու սքանչելի ես քո բարկութեանդ, քո ատելութեանդ ժամերին։ Ես չանցաւոր եմ, նայիր... ընկած եմ ոտքերդ... ես չեմ հեռանայ այստեղից... Կրծառայեմ քեզ... գուլպս պատւանդան կըշինեմ քեզ. իմ մտքերիցս միմիայն ազօթքներ կըհիւսեմ քեզ համար... Ամեն ինչ կանեմ, ամեն տեղ կ'երթամ... միայն... միայն մի խլիր ինձանից այդ գեղանի, սպիտակ, այդ հրաշալի մարմինդ...

Մի սուր փայլ շողաց կնոջ աչքերում, որ սքողած էր

խորհրդաւոր ժպտի մռայլ խաւարով, սարսափելի փայլ, նման յուսաբեկ կրծքի մի խելացնոր հառաչի... շողաց և մարեց...

—Մի զրկիր ինձ քո վարդագոյն շրթունքներից, որոնց գեղեցկութեան առաջ նսեմանում են երկրի բոլոր ծաղիկները: Մի ծածկիր այդ կուրծքդ, մի հեռացրու քո հայեացքներդ, որոնց փայլը ինձ համար թանդ է արևի լոյսից: Թող քո արիւնը միշտ եռայ ինձ համար, որովհետև նրա նւագները աւելի կախարդիչ են քան տիեզերքի ամբողջ հարմոնիան:

Ընկած կնոջ ոտքերը՝ նա շփում էր իր ճակատը հողի աւազին և դէպի վեր պարզած ձեռքերով մի համրոյր միայն աղերսում:

Կնոջ աչքերը իրանց քողարկող խորհրդաւոր ժպտի միջով սկսեցին չարախինդ փայլեր արձակել, քայլեր, որոնք աւելի և աւելի սպառնալի էին շողշողում Յանկարծ, ինչպէս վաղորդեան արևի պայծառ շիթերը, միգամած արշալոյսին, կնոջ դէմքի խորհրդաւոր խաւարից վայր դլորուեց չարախինդ, դառն հեգնութեամբ լի քրքջոցի մի ալիք. ալիքը զարնուեց մարդու գլխին և, իբրև հեծեծանք անդարձ անհետացած երջանկութեան, փշուեց ու տարածուեց դետնի վրայ:

Երկիրը դղրդաց այդ հեծկլտուն ծիծաղից...

ՅԻ-ՄԷՆ

Թեատրոն

«Պէպօի» 30-ամեայ յոբելեանը հայոց բեմի վրայ

Ապրիլի 30-ին հայկական բեմի նախահայր պ. Գէորգ Ամշկեան ը «Պէպօի» ստեղծի ներկայացման երեսնամեակը լրանալու առթիւ, կազմակերպեց այդ պիէսի ներկայացումը Թիֆլիսի Արտիստիական ընկ. թատրոնում, տիկ. և օր. Ամշկեանների, Մանդինեանի, Տէր-Դաւթեանի, Միրաղեանի մասնակցութեամբ: Ներկայացումը շատ յաջող էր և մեր տաղանդաւոր դրամատուրգի համար փառաւոր հանդէս:

Կենդանի պատկերներից յետոյ ընկալեց հեղինակին պատասխրելու հանդէսը: Բեմի վրայ խմբուել էին կարգ կարգ դերասանները պ. Գ. Սունդուկեանցի պիէսների մէջ դուրս բերած հերոսների գրիմով, նոյնպէս պանազան ընկերութիւնների և հիմնարկութիւնների ներկայացուցիչներ, որոնք կարդացին ուղերձներ և ներկայացրին պսակներ և պարգևներ: Թիֆլիսի Արտիստիական ընկ. կողմից խօսեց Վ. Ն. Պախոմովը. նա շեշտեց պ. Սունդուկեանցի նշանակութիւնը, որպէս չանընկճելի պաշտպանի ճշմարտութեան և լուսաւոր իդէալների: Ն. Ն. Մակարովը խօսեց Թիֆլիսի Արտիստ ընկ. սիրողների կողմից: Պ. Մուրադբէգեանը ընծայաբերեց պսակ և ուղերձ կարդաց ժողովրդական դասախօսների մասնախմբի հայկական բաժնի կողմից: Պ. Ա. Փալանթարը «Մշակի» կողմից: Հայ ուսանող երիտասարդութեան կողմից մատուցեցին ուղերձներ, պսակներ և ընծաներ: Արտիստ Տէր-Դաւթեանը Թիֆլիսեցու հագուստով և պ. Երիցեանը կինտոյի հագուստով խօսեցին, առաջինը հեղինակի բարեկամների կողմից և երկրորդը՝ Թիֆլիսի կինտոների կողմից: Պ. Թարխանեանը ուղերձ կարդաց էջմիածնի ճեմարանի աշակերտների, Թիֆլիսի հայ կանանց և «Նոր-Դարի» խմբագրութեան կողմից: Նա կարդաց նոյնպէս ստացած բաղմաթիւ հեռագրներից մի քանիսը, որոնց մէջ և Վեսելովսկի ամուսիններից:

Թատրոնը թնդում էր բրաւօից, կեցցէների ձայներից: Վերջը յարգելի դրամատուրգը բեմ դուրս գալով, իր շնորհակալութիւնը յայտնեց բոլոր հանդիսականներին ասելով ի միջի այլոց, որ ,,այս բոլորի համար ես պարտական եմ ոչ թէ ինձ անձամբ, այլ ձեր բարեսրտութեանը:'' Առանձին կերպով պ. Սունդուկեանցը իր շնորհակալութիւնը յայտնեց պ. պ. Ամշկեանին, Մանդինեանին, Տէր-Դաւթեանին, Միրաղեանին և այլոց, գրկախառնելով նրանց: Տեսարանը շատ սրտաշարժ էր:

Յաւում են, որ կարգադրիչների թուլութեան պատճառով (մեզ չէր յայտնուած որ ուղերձներ պիտի մատուցին), Տարազ - Ողբիւրի խմբագրութիւնն անկարող եղաւ մասնակցել այդ հանդիսին: Սակայն խմբագրութիւնն իր յարգանքն է մատուցանում Պէպօի պատկառելի հեղինակին, Տարազի համարեա ամբողջ Իլլիւստրասիօնը նւիրելով այդ հանդիսին:

«Պէպօի» երեսնամեակը վրաց բեմի վրայ

Ապրիլի 29-ին «Պէպօ» կոմէդիայի ներկայացման երեսնամեակը տօնելիս վրաց թատրոնում, մեծարեցին և նրա հեղինակ Գ. Սունդուկեանցին: «Պէպօն» մեծ շնորհքով ներկայացնելուց յետոյ, սկսեց հեղինակին մեծարելը: Բեմից ուղերձներ խօսեցին ուղղած պ. Սունդուկեանցին—որ նստած էր օթեակի մէջ—վրաց դրամատիքական ընկերութեան նախագահը, Թիֆլիսի արքունական թատրոնի դիրեկտոր պ. Ա. Օպոչինին, վրաց դերասանական խմբի կողմից Վ. Ա. Աբաշիձէն, որը կարդաց նոյնպէս Լ. Լիւդվիգովի մեծարանքի նամակը, ժողովրդական ներկայացումների հայկական բաժանմունքի ներկայացուցիչ Ջիրինեանը, մատուցանելով պսակ, ուսուց բաժանմունքի կողմից պ. Կուզանովը, վրաց —տիկ. Չիչիբաւա, որը ներկայացրեց ծաղիկեայ քնար: Այնուհետև վրաց դերասանական խմբի ամենահին արտիստը, որ մասնակցել էր «Պէպօի» վրաց լեզուով առաջին ներկայացման, ճառ խօսեց և պարգեց Սունդուկեանցի նշանակութիւնը, որպէս մի հեղինակի, որը նոր զարկ տւեց վրաց թատրոնի բեպերտուարին և պատճառ եղաւ վրաց թատրոնի վերածնութեանը: Վերջը կարդացուեցին շնորհաւորական հեռագրեր և Ն. Մեսխիի Սունդուկեանցին նւիրած ոտանաւորը: «Պէպօի» հեղինակը բեմ դուրս եկաւ և մի քանի սրտառուչ խօսքերով յայտնեց իր շնորհակալութիւնը:

ՀՕՆ

(Պէպօճեաի ու Կակուլիճեաի կողմից կարդաց Սուս. Երիցեանը, Պէպօի 30-ամեակի առթիւ)։

—

Պարոն ջան!

Էս օրս, էս իմ ազիզ ազգէրտին-քն ու էլի շատ ու շատ Պէպօներն ու Կակուլիներն իմ վրայ քաղցր պարտականութիւին դրին, ուր գամ ու էս ազնիւ խալխի առաջ քու գովքն անիմ, քու լաւ արարմունքների համար—մեր սրտալի շնորակալութիւինը այդնիմ։

Հա էլ ո՞ւնց կուլէր, ուր չըգայինք ու մեր սրտի ուրախութիւինը չըայդնէինք էն մինձ մարթուն, ուր ջէր եարսուն տարի առաջ մեր գովքն արից, մեր ազիզ ախպօր՝ Պէպօին յաւիտենապէս անմահացրուց։ Դուն, ուր մըզ, մըզ, միթոմ իշաւատաններիս, միթոմ պաժարնիներիս, կինտոներիս, միթոմ չիբդիրներիս ու խալխեմէն մասխարա գցած մոռացածներիս—Պէպօի, Կակուլիի ու Գիժ-Մողիի բերնով, լոթիանա, ուռնց որ մարթ, մարթ նշխեցիր ու խալխին, սաղ աշխարքին ճանչըցրիր մեր սրտի, մեր հոգու հիդ. դուն, ուր Ուրութին ադա Զիմզիմովին սաղ-սաղ թազեցիր. դուն, ուր Օսկան Պետրովիչին, Մըդրսովին, Գարասիմ Եակուլիչին—քաղկի էդ մինձ-մինձ մոքալաքներուն՝ դժուխքի փայ ու բաժին արիր. դուն, ուր Լէպրօինց Մաթուսի վուրթի անջիդար Փարսիդի նամարդութիւինը մըզ շանց տուիր ու էս օր էլ նրանց նման շատերուն տեհնում ինք. դուն, ուր էն ցիլինդրաուր, միթոմ ուսում արած կօսէ, Ալէքսանդր Մարմարովի լրբութիւինն ու փողասիրութիւինը աշխարքին իմաց տուիր, բաս մինք ո՞ւնց մոռանանք քիզ, մեր ազնիւ ու ազիզ, հէր ջան, մեր թազ ու սարծանք, պապ ջան։ Ուտա, ուրթի իմ ասում, էն օդջում-պատարագը գիտենայ, էն հալալ ախպէրութիւինով իմ օրթում ուտում, ուր մինք՝ Պէպօներս, Կակուլիքս ու Մողիներս քու արածը իսկի էլ չինք մոռանայ, ու քու ասածնիրը սրտներիս, ուղուփներիս մէջ էնպէս կու պահինք, ուռնցոր մարքրիտ, ալմաստ ու գմրուխտ։ Էնդուր էլ էս ազիզ օրը, էս խալխի առաջ, լոթիանա խմում ինք մեր կամպանիով ձիր ազիզ կինքի կենացը ու խնդրում ինք մեր քաղկի սաղ մինձ ու պստիկ սուրբերուն, վացուն ու վից սուրփ Դէսուրբներուն, ուր Աստուձ սաղ-սալամաթ պահէ քիզ շատ ու շատ երկար տարիներ, Հայուց ազգի, քիզ սիրողներու ու միզ—քու Պէպօների, Կակուլիների ու Մողիներու համար։ Ամին։

—

Գրականութիւն եւ մամուլ

—

Գ. Սունդուկեանցի յոբելեանը եւ «Օսկան Պետրովիչի» ճնճադաւը։

—

«Արուեստը դժուար է, բայց քննադատելը հեշտ». այս առածը աւելի քան երբեք յարմար է գալիս այն դէպքում, երբ մարդ վերջերս թերթում է „Մշակը“ և տեսնում թէ ինչպիսի դիւրութեամբ դատում-դատափետում են այս կամ այն գեղարուեստական աշխատութիւնը, այս կամ այն արուեստագէտին։ Ոչինչ. «Մշակի» համար քննադատելուց դիւրին բան չկայ. «Այս ինչը վատ բան է, այն ինչը շատ լաւ բան է»—ահա այդ բոլոր քննադատութիւնների ղեկավարիչ ձևը։ Եւ թերթի ոչխարացած ընթերցողը կրկնում է նոյնը։ Ի՞նչ արժէ օրինակ մի Լէօի համար՝ առնել Գ. Սունդուկեանցի ամենալաւ գործերից մէկը՝ «Օսկան Պետրովիչը» էն կինքում» և նրա մասին ասել այս խօսքերը. «իմ կարծիքով (բաւական համեստ), սա պ. Սունդուկեանցի ամենաթոյլ գործն է։ Աւելին կասեմ. ինչպէս է պ. Սունդուկեանցի այնքան խիստ ըէալական տաղանդը թոյլ տալ գրելու մի բան, որի մէջ պատյտ են գալիս դէերը, սատանաները, սար եկող չար հոգիները, դժոխքի ծառաները և այլ այսպիսի երևակայական սարսափներ, որոնք սարսափելի պիտ լինին մանաւանդ բեմի վրայ»։ (Մշակ, № 91. բանասիրական)։ Եւ ահա, էժանագին կրիտիկը խարանեց, փշրեց պ. Սունդուկեանցի այդ ամենագեղեցիկ գործերից մէկը, որը երբէ՛ք չ կարդացել է պ. Լէօն և ոչ էլ բեմի վրայ տեսել։ Ինչպէս ուրեմն, փոքրիկ պարոն, Հաուպտմանի նման մի խիստ ըէալական տաղանդը „թոյլ է տալ իրան“ գրելու իր սքանչելի Հաճնեցին, որի մէջ պատյտ են գալիս սև հրեշտակներ, փայլուն հրեշտակներ... Ի՞նչպէս է, որ այդ դերմանական նոր Շիլլերը „թոյլ է տալ իրան“, առանց պ. Լէօի կարծիքն առնելու, իր հանճարաւոր «Ընկղմած զանգակ» պիէսի մէջ դուրս բերելու հիւրիներ, զանազան ոգիներ, անտառային, ջրհորի և այլն, որոնք սարսափելի են մանաւանդ բեմի վրայ իրանց պոզերով, գորտային կերպարանքով և այլն...

Ի՞նչպէս է, որ դարուս Շէքսպիրը —Իբսէնը իր նշանաւոր „Պեր-Կինտ“ պիէսի մէջ „թոյլ է տալ իրան“ բեմի վրայ հանել զանազան հրէշներ, ոգիներ, որոնք առանց Լէօի թոյլտուութեան՝ ցաւկոտում են, պարում, ոստոստում. չէ որ այժմեան դրամատուրգների մէջ չկայ աւելի խիստ ըէալականը քան Իբսէնը։

Եւ վերջապէս քի՞չ կան այդպիսի սիմուոլիքական պիէսներ, անմահ գրուածքներ, որոնց հեղինակները թոյլտուութիւն չեն խնդրել պ.Լէօից։ Եւ մենք, տողերիս գրողը, թոյլ ենք տալ մեզ քանիցս, տեսնելով Օսկան Պետրովիչը, նրանով զմայլել պ. Սունդուկեանցի տաղանդի վրայ և տեսել ենք Եւրոպացի կրիտիկների, որոնք նոյն զմայլանքն են ցոյց տալ, երբ թարգմանաբար կարդացել են նրանց Օսկան Պետրովիչը։ Սակայն բոլորը եղել է առանց պ. Լէօի խորհրդատուութեան. խոստովանւում ենք, Օսկան Պետրովիչի պակասութիւնը միայն դրանումն է։

—

Թատրոնական

—

Երկրագործական մինիստրութեան ծրագրած հազիւ լեռնահանքային դպրոցը իր տիպարով նման է Իրկուտսկի դպրոցին, այն փոփոխութիւններով, որոնք կախումն ունին նաեւ արդիւնաբերութեան զարգացումից։ Դպրոցը ունենալու է երկու բաժանմունք՝ լեռնահանքային և դորձարանական, որոնցից առաջինը բաժանւում է շաղափականի և հանքային, իսկ երկրորդը մետաղագործակա-

նի և նաւթայինի։ Ուսման դասընթացը տևելու է չորս տարի։ Դպրոցը պահպանելու է գանձարանի հաշուով, ստանալով նաւթարդիւնաբերողներից տարեկան 10000 ր. օժանդակութիւն։

—Ամսոյս 4-ից սկսւում են հարցաքննութիւններ Թիֆլիսի առաջին կլասիքական գիմնազիոնում։

—Կովկասի ուսումնարանական շրջանի տեսուչ Մ. Թ. Զաւադսկին, ինչպէս կարդում ենք „Тифл. Лис.“-ում, ժողովրդական լուսաւորութեան մինիստրի հրամանագրութեան համաձայն՝ ստանձնեց արդէն Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի պաշտօնի վարումը։

ՄԱՀՈՂ ԹՄԻՆԵՐ

—Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը կայացաւ ապրիլի 29-ին քաղաքային խորհրդի դահլիճում՝ ընդ նախագահութեամբ բժշկապետ Ե. Նաւասարդեանի։ Ժողովը ղեղեց 1900 թ. հաշուի և 1901 թ. նախահաշուի քննութեամբ և հաստատեց նրանց և վարչութեան երեք անդամների փոխարէն, որոնք հերթով դուրս էին գալիս վարչութիւնից, րնտրեց նոր անդամներ—բժշկներ Խատիսեան և Թաւխոսեանց և վերընտրեց Ս. Նուրիջանեանին։

Ժողովում յայտնուեց, որ երեխայոց համար ապաստարան բանալու խնդիրը, ինչպէս և աշխատանաց տան համար, արդէն ներկայացած է իշխանութեանը ի հաստատութիւն։

Ընկերութեան գոյքը կազմած է իր սեփական, տարիներով ժողոված գումարներից, որ հասնում է 50,000 թ. և հանգուցեալ Խուդադեանի գումարներից նիւթած կալքերից և գումարներից, որոնք հասնում են մինչ 100,000 թ., այնպէս որ բարեգործութեան համար ընկերութիւնը կարող է լայն ասպարէզ բանալ, եթէ միայն հասարակութիւնը չդհամարի բարեգործութեան խնդիրը մի խումբ անձանց կապալ։

—Ապրիլի 30-ին քաղաքային վարչութիւնը ներկայացրեց նահանգապետին Ս. Դաւիթ լեռը բարձրանալու փունիկուլեօրի ծրագիրը և նկարները։

—Ապրիլի 25-ին Բագուի նահանգական վարչութեան մէջ տեղի ունեցաւ վոխ-նահանգապետի նախագահութեամբ նահանգական առողջապահութեան վերահսկող մասնաժողովի նիստը, որի քննութեան առարկան էր, նահանգի մէջ քրնձի մշակութիւը սահմանափակել, որպէսզի ազգաբնակութիւնը ազատւի տենդային հիւանդութիւններից, որոնց սկզբնապատճառն են քրնձի ցանքերը։ Ժողովը այդ ուղղութիւնով պարտաւորական կանոններ մշակեց, որոնց պէտք է ներկայացնեն նահանգապետին։

– Ինչպէս լսւում է, Թիֆլիսի նահանգական վարչութիւնն արդէն ուղարկել է ներքին գործոց մինիստրութեանը հաստատելու Թիֆլիսում էլէկտրական լուսաւորութիւն կազմակերպելու ծրագիրը։ Ինչպէս յայտնի է, "Գելիոս„ ընկերութիւնը պարտաւորւել է պատրաստել լուսաւորութիւնը մի տարի և 3 ամսւայ ընթացքում. ուրեմն յուսալի է, որ եկող տարւան աշնանը Թիֆլիսն արդէն էլէկտրական լուսաւորութիւն կունենայ։

—Կովկասի գիւղատնտեսական և արդիւնաբերական ցուցահանդիսի գլխաւոր ղեկավար մանկավարժական—արհեստագիտական բաժնի՝ նշանակւած է Թիֆլիսի նահանգի ժողովրդական ուսումնարանների դիրեկտոր Պ. Դմիտրիեւ։

—Անձրևներից Կուր գետի ջրերը բարձրացել և շատ վնասներ են հասցնում նաւթլուղի այգեհէրերին. շատ պարտէզներ ողողած են ջրով, ցանքերը, ցանկապատերը քանդւած են և մի քանի ջրաշարժ անիւներ կորած։

—Նորերումս վախճանած Կ. Զուբալովը, որի ժառանգները նւիրել են 100 հազար րուբլի Թիֆլիսում կառուցանւելիք ժողովրդական տանը, կտակել է նոյնպէս՝ 1, Սոլոլակի կաթոլիկների գերեզմանոցին 5000 ր., 2, կաթոլիկ—Տաղմ. Ս. Րոզարեի կան. դպրոցին 2000 ր., 3, Թիֆլիսի Պողոս—Պետրոսի, Փորու Քուեթայիսի կաթոլիկ. եկեղեցիներին 3000 ր., 4, Փորւայ Աննաստասևակի կան. պրօգիմնազիային 1000 ր., որի ½ պէտք է յատկացւի ամենաաղքատ աշակերտուհիների ուսման վարձը վճարելու. 5, Փորու քաղ. դպր. 2000 թ., 4 յոդ. Նշանակութիւնով. 6, Թիֆլիսի "Ծաղիկ„ ընկ., երեխայոց խնամող ընկ. 500-ական ր.։ Ազգականներին և ծառայողներին 70 հազար րուբլի. Թիֆլիսի կալքերի կառավարիչ Ս. Ս—ևին 15 հազար րուբլի։

—Ռուսական Արքունական ձկնաբուծական և ձկնորսական ընկերութիւնը Թիֆլիսի գիւղատնտեսական և արդիւնաբերական ցուցահանդիսին յատկացրել է երեք արծաթեայ մէդալ։

—Պետերբուրգի գիւղ. կալւածատէրների ակումբը նշանակել է նոյն ցուցահանդիսի էկսպոնատներին պարգևատրելու նպատակով՝ երեք արծաթեայ, վեց բրոնզեայ մէդալ և 12 գովասանական թերթ։

—"Рус. Вѣд.„ ի մէջ գրւած է, որ քաղաքային վարչութիւններն իրաւունք ունին կազմել ազգաբնակութեան համար պարտաւորական կանոններ, ներքին գործոց մինիստրի մեկնութիւնով կարող են միայն քաղաքային դումաները, իսկ կրճատած ձևով քաղաք. վարչութիւն ունեցող քաղաքների համար այդպիսի կանոններ կարող են հրատարակել նահանգական իշխանութիւնները։

—„Рос“-ի ասելով ներքին գործոց մինիստրութեանը ներկայացրած է **կաուխթի այգեհէրերի** խնդիրը՝ թոյլ տալ նրանց վոխադարձ ընկերութիւն կազմելու, այգինները ապահովելու համար։

—Քաղաքիս մէջ ներկայումս մսի պակասութեան առթիւ նշանակւած էր քաղաքային վարչութեան ժողով մասնակցութեամբ անասնաբուժական մասի կառավարիչ Պ. Բեմերի, նահանգական անասնաբոյժ Սինեւսկու և հացի, մսի դներ կազմող մասնախմբի անդամների և քաղաքային անասնաբոյժների։ Ժողովի քննութեան խնդիրն է լինելու մսի սակաւութեան պատճառները պարզելու և նրանց առաջն առնելու միջոցներ մշակել։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Չինաստանը մի յայտագրով պատասխանել է Պեկինի դեսպաններին, որ ընդունում է պետութիւններին հասանելիք վարձատրութեան 450 միլիոն տաէլի ընդհանուր գումարը և առաջարկում է այդ գումարը վճարել երեսուն տարւայ ընթացքում, ամեն տարի վճարելով 15 միլիոն, սկսած 1902 թւի յուլիսից։ Սրանից երևում է, որ Չինաստանը պատրաստ է կատարել օտար պետութիւնների պահանջը, սակայն հարց է ծագում, թէ պետութիւնները միաբան կընկնին վճարները հատուցանելու միջոցների և ապահովութեան հարցի վերաբերմամբ։

—Հարաւ-Աֆրիկայից եկած հեռագիրներից երևում է, որ Կիչինները Անգլիա է ուղարկում մի քանի գօրաբաժիններ։ Սրանից եզրակացնում են, որ պատերազմը մօտ է վերջանալուն։ իսկ միւս կողմից տեղեկութիւններ են գալիս, որ բօէրների մէջ մի նոր գօրապետ է յայտնւել, Կրուլիցինգեր անունով, որին երկրորդ Դէւէտ են համարում։ Նա 35 տարեկան է, խօսում է անգլիերէն և կրթւած անձնաւորութիւն է։ Նրա գօրախումբը թէև բաղկացած է 250 հոգուց, սակայն դրանցով գործում է քաջութեան հրաշքներ։ Դէւէտն էլ հանգիստ չէ և իր ցրւած ոյժերը հաւաքում է։ Ընդունելով, որ բաւականաչափ բօէրներ գերի են ընկել կամ ըսպանւել են, այժմ 15 հազար հոգի պէնք բռնող բօէրներ կան։

Հաւատացնում են, որ լորդ Ռոբերտսի և զինուորական մինիստր Բրոդրիկի մէջ անհամաձայնութիւն կայ, որի պատճառով անգլիական զօրքերի հրամանատար Ռոբերտսը մտադիր է հրաժարուել իր պաշտօնից։

—Քաղաքական նորութիւն է և՛ Ռումինիայի թագաւոր Կարլի տեսակցութիւնը Յունաստանի Գէորգ թագաւորի հետ։ Տեսակցութիւնը տեղի է ունեցել Աբբազիայում, յունական հոգի վրայ և ջերմ բարեմաղթութիւններ են ուղղել երկու թագաւորները։

—Սիմլայից հեռագրում են, որ Աւղանական էմիրը յատուկ գործակալ ուղարկեց Գերմանիա վեց բատարէի կրուպպի թնդանօթներ գնելու, որոնք նշանակուած են Աւղանստանի սահմաններն ամրացնելու համար։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջիկայ Կովկասեան գիւղատնտեսական եւ արդիւնաբերական ցուցահանդեսի տպագրական գործի պատիւիոնը կազմակերպող մասնախումբը հրաւիրում է այն անձանց, որոնք ուզում են ի ցոյց դնել իրանց էկսպոնատները, դրա մասին յայտնել վաղօրօք, այն է մինչև մայիսի 20-ը, ցոյց տալով էկսպոնատներին հարկաւոր տարածութիւնը քառակուսի արշիններով։ Մի քառակուսի արշին պաւիլիոնի մէջ արժէ 5 մինչև 1 (կենդրոնական սրահիկում)։ Յայտարարութեան հետ պէտք է ներկայացնել կանխավճար իւրաքանչիւր քառ. արշ. տեղի համար 3 ր. պաւիլիոնում։ Էկսպոնէնտներ կարող են լինել Կովկասեան ա) պարբերական հրատարակութիւններ, բ) գրավաճառնոցներ, գրքեր հրատարակողներ, գ) տպարաններ, վիմագրատներ, լուսանկարչութիւններ, որոնք որևէ կապ ունին մամուլի հետ։

Դիմումներ ուղարկելու է, Թիֆլիս մասնախմբի քարտուղար Ի. Մ. Դոլուխանով իհասցէով (Դանովսկի փող. տ. № 11)։ Անձամբ քարտուղարի հետ խօսակցելու համար նշանակուած է ամեն օր երեկոյեան 5-ից մինչև 6 ժամը։ Հեռախօսի № 678։ Տպագրական գործի պաւիլիոնում ջոկ տեղ է յատկացրած ձրի ընթերցարանի և բիւրօ պ. պ. մամուլի ներկայացուցիչների գրասենեակների համար։ 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի տեղեկութիւն հասարակութեան, որ Թիֆլիս քաղաքում համաճաշն ձիաների տօնավաճառների կանոնադրութեան, հաստատուած Կովկասի կառավարչապետի կողմից ներկայ մայիսի 5-ից բացւում է ձիաների տօնավաճառ, որը պէտք է տևէ մինչև մայիսի 17-ը, հաշուած և այդ օրը։ Այդ ձիաների տօնավաճառի տեղը նշանակուած է Դիդուբէում Կովկասեան երիվարապաշտպանութիւնը խրախուսող ընկերութեան իպոդրոմի մէջ։ № 2059

Լոյս տեսաւ
Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ
Բժշկի զրոյցներ № 1
«ՄԻ ԽՄԻՐ»
Գինն է 5 կոպ.

Մամուլի տակն է
«ՎԱՏ ՅԱՒ» 2—5

Բ Ժ. Ա. ՉԽԵԱՆ
Վելիամինովսկայա փ. № 7.
Ընդունում է ամեն օր
առաւօտը 9—11 ժամը
երեկոյեան 5— 7 ժամը։
10—4

ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
(Քիի, կոկորդի, ականջի հիւանդութիւններ)
առ. 9—11 ժամը, երեկ. 5—7-ը.

ԱՒԱՋԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ընդունում եւ ամեն օր
բացի կիրակի օրերից,
Առաւօտեան ը
ք. Ա. Նալբանդեան—11—12 ժ. վի աբուժութեան, վեներական (սիֆիլիս) եւ միզասեռ. հ.
Կ. Ի. Զիկովսկի—9—10 ժ. այրի, ներքին եւ մեարդային հ.
Կ. Ի. Գելեխ—11—12 ժ. կանանց եւ երեխայոց հ.
Զ. Ի. Բաբանովսկոց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին եւ երեխայոց հ.
Երեկոեան ը
Ն. Ն. Ռոստոմբեկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Զպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն). վեներ. և մորթու հ.
Փ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.
Ք. Ա. Նալբանդեան—7½—8 ժ.
Վճար 50. կ. չքաւորները ձրի։ Համաձայնուած համար (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Ծ. Տ. Աւետիսեանի—տանը ծաղկաճաշուքեամբ, բժշկական մարմնամարզ գուբեամբ դիմել 11—1 ժ.
Հիւանդանոցի վերատեսուչ
Բժշկապետ Նալբանդեան

Լոյս տեսաւ
ՊԵՏՐՈՍ ՄՈՍԱՈՒԵԱՆՑԻ
ՍՄՏԻ ԶԼԽՐՔԵՐԸ
(առձակ բանաստեղծութիւններ)
գինը 10 կոպ.
Վաճառւում է Թիֆլիսի և ղգալառական քաղաքների գրավաճառների և Աղէքսանդրապոլ, Հելինակի մօտ։

1901 յուլիսի 1-ից Պարիզում կրսկսի լոյս տեսնել հայերէն լեզուով
«ՓԱՄԱՆԱԿ»
Համդէս գրական, հասարակական, գեղարուեստական, քաղաքական։
Փամանակը կունենայ այն բոլոր բաժինները, ինչ որ ունին եւրոպական գրական հանդէսները, առանձնապէս ուշադրութիւն դարձնելով դիտական ու գեղարուեստական բաժինների վրայ։
Փամանակի առաջին համարը լոյս կրտեսնի ճիշտ 1901 թուականի յուլիս 1-ին և ներկայ թուականին կրհատարակուի երկու ամիսը մի անգամ, իսկ 1902 թուականի յունուար 1-ից կրհրատարակուի իւրաքանչիւր ամիս։
Բացուած է բաժանորդագրութիւն 1901 և 1902 թուականների։
Բաժանորդագրութիւն 1901 թուականի (կիսամեակ) Բաժանորդագրութիւն 1902 թուականի (12 գիրք)
Ռուսաստան. . . . 3 րուբլի . . . . . 10 րուբլի
Բաժանորդագրութիւն 1901 և 1902 թուականների համար (15 գիրք)
Ռուսիա . . . . 12 րուբլի։
Ամենայն տեղերից դիմել հետևեալ հասցէով։—Paris, (France) 64 rue Claude-Bernand. Directeur de la Revue «JAMANAK» S. Hakhoumian